Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տարրական դասարանների ուսուցչի /դասվար/(20 դասաժամ), ֆիզկուլտուրայի (21 դասաժամ), մաթեմատիկայի (20 դասաժամ), աշխարհագրության (11 դասաժամ) և տեխնոլոգիայի (1 դասաժամ, տղաների խումբ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության **հրապարակման օրվանից մինչեւ 2024 թվականի Մարտի 20-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխախտանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թվականի մարտի 26-ին՝ ժամը 14:00-ին,** Լոռու մարզի Ախթալայի N 1 միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Լոռու մարզ. ք. Ախթալա, Աբովյան փողոց, շենք 10:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 40-56-05 հեռախոսահամարով: